ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՏԱՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Արձանագրություն N2

քաղաք Երևան տասնյոթ ապրիլի երկու հազար տասնչորս թվականի

ՀՀ արդարադատության նախարարության նոտարների որակավորման ստուգման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 2014 թվականի ապրիլի 17-ի նիստում ուսումնասիրեց և ամփոփեց նոտարների որակավորման ստուգման երկու թեկնածուի դիմումները և լրամշակված փաստաթղթերը:

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝

Ա. Օրբելյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Ն. Բալայան - ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի համակարգի իրավական ապահովման վարչության պետ

Հ. Սարգսյան - ՀՀ արդարադատության նախարարի օգնական

Դ. Մխեյան - ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչության նոտարիատի և քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների գործունեության օրինականության վերահսկողության բաժնի պետ

Ռ. Մուկուչյան - Գյումրի նոտարական տարածքի նոտար

Ռ. Սահակյան - Կենտրոն նոտարական տարածքի նոտար

Օ. Հակոբյան - Նոր Նորք նոտարական տարածքի նոտար

Տ. Գրիգորյան - Գավառ նոտարական տարածքի նոտար

Ներկա էր հանձնաժողովի քարտուղար Լ. Իսկանդարյանը:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Արսեն Սարգսյան կողմից ներկայացված բողոքի և դրա հիմք հանդիսացող լրացուցիչ փաստաթղթերի ուսումնասիրություն:
2. Նարեկ Պողոսյանի կողմից ներկայացված բողոքի և դրա հիմք հանդիսացող լրացուցիչ փաստաթղթերի ուսումնասիրություն:

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ՝

Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց, որ որակավորման ստուգման համար 2 թեկնածու՝ Արսեն Սարգսյանը և Նարեկ Պողոսյանը, ներկայացրել են դիմում և հավելյալ փաստաթղթեր՝ Հանձնաժողովի կողմից իրենց դիմումի մերժումը բողոքարկելու նպատակով: Նշված դիմում-բողոքները նախնական ուսումնասիրվել են և պատրաստվել է համապատասխան տեղեկանք: Երկու դիմումները և կից փաստաթղթերը ուսումնասիրվեցին և քննարկվեցին Հանձնաժողովի անդամների կողմից:

Դիմումները քննվել են հաշվի առնելով ՀՀ կառավարության 2002 թվականի հունիսի 6-ի «Նոտարների թեկնածուների որակավորման ստուգման կարգը հաստատելու մասին» N 789-Ն որոշմամբ (վերախմբագրվել է ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 29-ի N 1463-Ն որոշմամբ) հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) պահանջները:

Օրակարգի առաջին հարցի հետ կապված արձանագրվեց, որ Արսեն Սարգսյանը ներկայացրել էր բակալավրի դիպլոմ, որում նշված էր, որ այն տրվել է 2011 թվականին, որի հիման վրա Հանձնաժողովը եզրակացրեց, որ տվյալ դիմորդի կողմից ներկայացված 12 տարվա իրավաբանի աշխատանքային ստաժի հաշվարկը «կարող է սկսվել միայն անձի կողմից բակալավրի դիպլոմը ձեռք բերելու պահից»: Սակայն, դիմորդի կողմից ներկայացված հավելյալ տեղեկանքի համաձայն, նա ստացել էր բակալավրի դիպլոմը 1998 թվականին, իսկ 2011 թվականին միայն վերահանձնել է ավարտական քննությունները, հավատարմագրված դիպլոմի ձեռքբերման նպատակով, ինչը նախատեսվում էր ՀՀ կառավարության որոշմամբ: Այս փաստը հաստատվեց նաև ՀՀ կրթության և գիտության նախարարություն հարցում կատարելու միջոցով: Հետևաբար տվյալ դիմումը ամբողջությամբ համապատասխանում է Կարգում առաջադրված պայմաններին:

Օրակարգի երկրորդ հարցի հետ կապված Հանձնաժողովը ուսումնասիրեց Նարեկ Պողոսյանի բողոքը, և վերջինիս կողմից ներկայացված նոտարի կողմից տրամադրված եզրակացությունը, որի համաձայն, նա անցել է ստաժավորումը 2009 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2010 թվականի օգոստոսի 1-ը:

Դիմումը մերժվել էր, քանի որ «Նարեկ Պողոսյանի կողմից ներկայացվել է նոտարի եզրակացություն, որը տրված է եղել 2008 թվականի հուլիսի 1-ից մինչև 2009 թվականի հուլիսի 1-ը ներառյալ ստաժավորում անցնելու համար:» Այնինչ, տվյալ դիմորդի բարձրագույն իրավաբանական կրթությունը հավաստող բակալավրի դիպլոմը նրան է տրվել 2009 թվականի մայիսի 25-ին, այսինքն մինչև իրավաբանի բարձրագույն կրթության ձեռքբերումը:

Հաշվի առնելով, դիմորդի կողմից նոտարի մոտ ստաժավորում անցնելու մասին հավելյալ ներկայացված փաստաթուղթը, որոշվեց ընդունել դիմումը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Թույլ տալ Արսեն Սարգսյանին մասնակցել նոտարների որակավորման ստուգմանը՝ համաձայն իր կողմից ներկայացրած հավելյալ փաստաթղթերի, թեստավորման փուլին ներկայանալ սույն թվականի ապրիլի 19-ին, առավոտյան ժամը տասին (10.00-ին), հասցե՝ ք. Երևան, Հալաբյան 41ա, 14-րդ հարկ:

ընդունվեց միաձայն

2. Թույլ տալ Նարեկ Պողոսյանին մասնակցել նոտարների որակավորման ստուգմանը՝ համաձայն իր կողմից ներկայացրած հավելյալ փաստաթղթերի, թեստավորման փուլին ներկայանալ սույն թվականի ապրիլի 19-ին, առավոտյան ժամը տասին (10.00-ին), հասցե՝ ք. Երևան, Հալաբյան 41ա, 14-րդ հարկ:

ընդունվեց միաձայն

Արձանագրությունը կազմված է 2 էջից:

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. ՕՐԲԵԼՅԱՆ

Հանձնաժողովի քարտուղար՝ Լ. ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ